

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՀՀ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ,
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ Սյունիքի մարզի Հարժիսի Հ.Մինասյանի անվան միջնակարգ
դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի՝ Անուշ Վարդանյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Խուրշուդյան

2023թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անտառ, բուսածածկույթի կիմնական տիպ, աշխարհագրական լանդշաֆտ, կենսոլորտի բաղկացուցիչ մաս: Ծառերի թփերի և բուսական մյուս կենսաձևերի, կենդանիների և միկրոօրգանիզմների բազմազանության ամբողջություն, որոնք փոխադարձաբար կապված են միմյանց և շրջակա միջավայրի հետ: Անտառը բնության մարգագետին է: Անտառների առատությամբ ու բնույթով է որոշվում յուրաքանչյուր երկրի բնության հարստության չափանիշը : Դրանք բարելավում են կլիմայական պայմանները, օդը հարստացնում են թթվածնով: Անտառը օգտագործվում է որպես հսկայական փայտանյութ, որից պատրաստում են ֆաներա, կահույք, երաժշտական գործիքներ, կաուչուկ և շատ ուրիշ նյութեր: Անտառում գլխավոր դերը պատկանում է ծառերին ու թփերին, իսկ երկրորդականը՝ խոտաբույսերին, թփուտներին, մամուռներին, քարաքոսերին և այլն: Միատեսակ ծառերից օրինակ կաղնուց կազմված անտառները կոչվում են մաքուր անտառ, տարբեր ծառատեսակներից, օրինակ կաղնուց և հաճարենուց կազմվածները՝ խառնանտառ: Անտառի կառուցվածքը պայմանավորված է ծառերի բարձրությամբ, շարահարկայնությամբ, խորությամբ, ծառաթփային տեսակաշարով: Անտառներում աճում են մեծ քանակությամբ օգտակար բույսեր՝ ընկուզենիներ, սնկեր: Անտառը նաև ապաստան է հանդիսանում մի շարք վայրի կենդանիների համար: Քանի որ անտառները կարևոր դեր են խաղում կենսամիջավայրի ընդհանուր համակարգում, մարդը հնուց ի վեր հոգ է տարել նրանց պահպանման և ընդարձակման մասին: Ներկայումս երկրագնդի վրա տարեկան մի քանի միլիոն հեկտար նոր անտառներ են տնկվում: Բնական անտառներում հազարամյակների ընթացքում ձևավորվում է տիպիկ անտառային միջավայրը՝ բիոգեոցենոզը, որը հնարավոր չէ ստեղծել արհեստական եղանակով: Բնական անտառում իշխում է բնությունը, իսկ արհեստական անտառում՝ մարդը: Անտառային բիոգեոցենոզը անտառի մի հատվածն է, որը միատարր է տեսակային կազմով, կառուցվածքով: Անտառի բոլոր օրգանական և անօրգանական տարրերը սերտորեն կապված են միմյանց հետ և փոխադարձաբար պայմանավորված մեկը մյուսով: Անտառը հանդես է գալիս որպես մի միասնական օրգանիզմ, որտեղ, յուրաքանչյուր բույս, կենդանի բնության երևույթ,

անօրգանական աշխարհի մասնիկ իր մշտական ու կայուն տեղն ունի այդ համակարգում՝ անտառային բիոգեոցենոզում: Անտառում ապրում են բազմաթիվ կենդանիներ՝ գիշատիչներ, թռչուններ, սողուններ, միջատներ, որոնք իրենց գոյությամբ պարտական են անտառին: Պետք է նշել, որ անտառի ջրակարգավորիչ դերն ու նշանակությունը շատ մեծ է: Միայն վերջին 200 տարում Հայաստանի տարածքում անտառային տարածությունները կրճատվել են ավելի քան երկու անգամ: Պատճառն այն է, որ կլիման վատթարացել է, ջրային ռեժիմը խախտվել, հողերը ենթարկվել են էրոզիայի, խիստ կերպով իջել է գյուղատնտեսական կուլտուրանների բերքատվությունը: Չափազանց մեծ է նաև անտառի տնտեսական նշանակությունը: Հումքի աղբյուր լինելուց բացի անտառը բարելավում է կլիման, կանոնավորում ջրային ռեժիմը, կանխում հողի էրոզիան և ունի կարևոր նշանակություն մարդկանց առողջության մասին: Անտառապատ տարածությունների կրճատումները և անտառների համակցվածության պակասելը, խիստ կտրատված լեռնային ռելիեֆի պայմաններում զգալիորեն վատթարացել են նրանց ջրականոնավորիչ և հողապաշտպան հատկությունները:

Հայաստանի անտառային ֆոնդը և անտառների ներկա վիճակը

Պատմական Հայաստանը հարուստ է եղել բնական սաղարթախիտ անտառներով: Առանձնապես անտառապատ էին Արցախը, Սյունիքը, Գուգարքը, Տայքը և այլ գավառներ: Ներկայիս անտառագուրկ շատ վայրեր այդ թվում Գեղարքունիքը, Շիրակը և նույնիսկ Արարատյան դաշտի որոշ շրջաններ հարուստ են եղել անտառներով: Մի շարք ուսումնասիրությունները հաստատել են , որ նախկինում Սևանի ավազանում անտառները հսկայական տարածություն են զբաղացրել: Ներկայումս մեր հանրապետությունը համարվում է երկրագնդի անտառագուրկ շրջաններից մեկը և բնակչության մեկ շնչին ընկնող անտառային տարածությամբ գրավում է ամենավերջին տեղերից մեկը: Հայաստանում մեկ բնակչին բաժին է ընկնում 0.1հա ծառածածկ տարածք, մինչդեռ ԱՊՀ երկրներում այս ցուցանիշը 27 անգամ ավելին է՝ կազմելով 2.7 հա 1 բնակչի համար:

Հայաստանի Հանրապետության անտառային պետական ֆոնդը կազմում է երկրի տարածքի 11.7%-ը՝ մոտ 407 հազար հա, որից 334.1 հազար հա անտառածածկ տարածքներ են, այդ թվում մոտ 50 հազար հա արհեստական անտառները;

Հայաստանի անտառներն իրենց ծառատեսակներով ու բուսածածկույթով պատկանում են Կովկասյան և Հայկական-իրանական մարզերին: ՀՀ Կովկասյան մարզի մեջ մտնող ներկայիս անտառների հիմնական ծառատեսակները /հաճարենի, բոխի, թխկի, կաղնու շատ տեսակներ, խնձորենի, լոբենի, կեռասենի, դժնիկ, թեղի, հացենի և այլն) :

Մառցադաշտային ժամանակաշրջանում վերջնականապես ոչնչացել են անտառների խոնավասեր ու ջերմասեր տեսակները, և մերձարևադարձային փարթամ անտառներն իրենց տեղը զիջել են տերևաթափ անտառներին, որտեղ գերիշխում են հաճարենին, կաղնին և ցրտադիմացկուն այլ տեսակներ:

Հետսառցադաշտային ժամանակաշրջանում Հայաստանի անտառածածկը նոր փոփոխության է ենթարկվել: Հայկական-իրանական մարզի /ՀՀ սահմաններում ընդգրկում է Միջին Արաքսյան գոգավորության հատակն իր նախալիսալեռներով Արփա գետի ավազանը, Զանգեզուրի հարավային մասը/ անտառներն աչքի են ընկնում չորասեր բուսատեսակներով: Երրորդական ժամանակաշրջանից հետո տուժել են չորասեր նոսր անտառները: Առավել անտառածածկ են ՀՀ հյուսիսարևելյան մարզերը, որտեղ բուսականության հիմնական տիպը հաճարենու անտառներն են /արևելյան հաճարենու գերակշռությամբ/: Ենթալայան անտառային գոտում տարածված են հաճարենու խոնավ անտառները, որոնց ներսում և եզրերին լայնորեն տարածված են կաղնու գուտ և խառը ծառուտները: Զուտ կաղնու անտառները հիմնականում հարմարված են հարավային չոր լանջերի միջին և վերին գոտիներին, իսկ կաղնու խառը անտառները՝ արևմտյան և արևելյան լանջերին: Հյուսիս-արևելյան մասի կաղնուտներում հիմնական անտառկազմող ծառատեսակներն են վրացական և արևելյան կաղնիները: Կաղնու առավել տիպիկ անտառները տարածված են Լոռու մարզում: ՀՀ հյուսիսում տեղ-տեղ հանդիպում են սոճու անտառների ոչ մեծ տեղամասեր: Ամենամեծը Գյուլագարակի և Շահալիի սոճուտներն են: Հարավում անտառների համեմատաբար ընդարձակ տարածքներ հանդիպում են Սյունիքի

մարզում/հիմնականում՝ վրացական կաղնի, հացենի, թխկի, բոխի, կովկասյան տանձենի, ինձորենի, նաև սգնի, քնկուզենի, հոնի, մրտավարդ, ծառանման տխլենի և այլն/։ Ապարանում, Բյուրականից հյուսիս, Սևանի լեռնաշղթայում, Արեգունու լճեզերքին, Վեդի գետի ավազանում, Վայքում պահպանվել են արևելյան կաղնու անտառների առանձին, փոքր կղզյակներ։ Հայկական լեռնաշխարհում հատկապես անտառածածկ են Արևելապոնտական լեռների հարավային և հյուսիսարևելյան, Հայկական Տավրոսի, Ներքին Տավրոսի հարավային, Արցախի լեռնաշղթայի արևելյան լանջերը։

Հայաստանի անտառները դարերի ընթացքում

ՀՀ ներկայիս անտառազուրկ զգալի տարածությունները վաղ անցյալում ծածկված են եղել անտառներով։ Այդ են վկայում հին պատմիչները և անտառների մնացորդները։ Հայոց թագավորների հովանավորությամբ ու նախաձեռնությամբ արքունի կալվածք Այրարատ նահանգում տնկվել են արհեստական անտառներ։ Մովսես Խորենացին հիշատակում է Արմավիր մայրաքաղաքի մոտ հայ ազգապետ Արամանյակի տնկած Սոսյաց անտառի մասին (մ.թ.ա. I հազարամյակի 1-ին կես)։ Երվանդ Դ արքան (մ.թ.ա. III դ. վերջ) Շիրակում տնկել է Օնոկոց անտառը։ Խոսրով Բ թագավորի օրոք (332-338) տնկել են Խոսրովակերտ և Տաճար մայրի անտառները, որոնք շրջափակվել են պարիսպներով և բնակեցվել կենդանիներով ու թռչուններով։ Հայաստանի անտառների զգալի մասը միջին դարերում ոչնչացվել է օտարերկրյա արշավանքների ժամանակ։ ՀՀ-ում շատ անտառներ գտնվում են հատուկ պահպանության տակ։

Հայաստանի Հանրապետության անտառները կարելի է բաժանել երեք գոտիների՝ ներքին, միջին և վերին։

ՆԵՐՔԻՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՈՏԻ-Ընդգրկում է այն անտառային տարածությունները, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 550-1100մ բարձրության վրա; Անցած տարիների ընթացքում անթրոպոգեն գործոնների ազդեցության հետևանքով անտառի ստորին

սահմանը բարձրացել է 300-500 մետրով: Այս անտառները կազմված են ցածրարդյունավետ մացառային տնկարկներից: Հայաստանի կենտրոնական շրջանները խիստ անտառազուրկ են: Անտառապատվածությունը կազմում է 2,0%: Այստեղ 1250 մ-ից ներքև անտառային բուսականությունը գրեթե բացակայում է: Չանգեզուրում անտառային բուսականությունը տարածվում է 600-2500 մ բարձրության վրա: Անտառի ներքին գոտում 600-1000 մ սահմաններում տարածված են գլիու նոսրանտառներ, 900 մ բարձրությունից հետո փոխարինվում են վրացական կաղնիով, կամ էլ հացենու և մի շարք թփատեսակներից կազմված տերևավոր նոսրանտառներ:

ՄԻՋԻՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՈՏԻ- Ընդգրկում է հանրապետության այն անտառները, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 900-1800 մ բարձրության վրա: Այս անտառները հիմականում կազմված են հաճարենու, բոխու, լորենու ծառատեսակներից: Մինչև 1400 մետր բարձրությունները հանդիպում են ընկուզենի, կենի: 1200-1400 մետր բարձրության վրա տարածվում է կաղնու երկու տեսակ՝ վրացական և արևելյան: Հայաստանի կենտրոնական շրջաններում ծովի մակերևույթից 1250-1650 մ բարձրություններում ընկած գոտում հանդիպում են գլիու նոսրանտառներ:

ՎԵՐԻՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳՈՏԻ- Ընդգրկում է անտառային այն տարածքները, որոնք գտնվում են ծովի մակարդակից 1700-2100 մ բարձրության վրա, արտեղ հանդիպում են արևելյան կաղնի: Իսկ 1900 մ բարձրության վրա հանդիպում է նաև կովկասյան բոխին: Անտառի վերին սահմանը մի գոտի է, որից բարձր արդեն անտառայինը փոխարինվում է այլ տիպի բուսականությամբ:

Անտառներում գլխավոր դերը պատկանում է ծառատեսակներին և թփերին, որոնք ըստ կենսաէկոլոգիական առանձնահատկությունների և տնտեսական նշանակության ,Հայաստանում բաժանվում են հետևյալ խմբերի՝

1. գլխավոր կամ անտառկազմող
2. երկրորդական կամ ստորադաս
3. լուսասեր և չորադիմացկուն
4. հազվագյուտ տեսակներ

5. արժեքավոր թփեր

6. վայրի պտուղներ

1. Գլխավոր կամ անտառկազմող տեսակները /հաճարենի, կաղնի, բոխի, սոճի/
անտառային համակեցության գերիշխող, դիմացկուն ամենախոշոր ծառերն են, որոնք
զբաղվում են առաջին շարահարկը և զբաղեցնում են մեծ տարածք:

2. Երկրորդական կամ ստորադաս տեսակները /արևելյան
բոխի, թխկի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն/ ստվերասեր են, խոնավասեր,
զբաղեցնում են երկրորդ շարահարկը:

3. Լուսասեր և չորադիմացկուն տեսակները /գլխի, վրացական թխկի, Ֆենցլի
նշենի, խնկենի և այլն/ կազմում են «լուսավոր» նոսր անտառները:

4. Հազվագյուտ տեսակները զբաղեցնում են սահմանափակ տարածք կամ
բուսաշխարհի հնագույն ներկայացուցիչներն են: Դրանք բաժանվում են հետևյալ
խմբերի՝

- ասեղնատերևավորներ /կենի/,

-մշտադալար տերևավոր /թփային հասմիկ, մրտավարդ, դափնյակ, սովորական
բաղեղ և այլն/

-տերևաթափ /արևելյան սոսի, թաղարենի բոխատերև, սովորական մտրակակոթ
և այլն/ տեսակներ

5. Արժեքավոր թփերը /սովորական բոնչի, գերիմաստի, ցախակեռաս,
դրախտածաղիկ և այլն/ Էվոլուցիոն տեսակետից ավելի զարգացած են, քան ծառերը, և
օժտված են արտաքին միջավայրի անբարենպաստ պայմաններին հարմարվելու մեծ
ունակությամբ:

6. Վայրի

պտղատուները /խնձորենի, տանձենի, սերկևիլենի, կեռասենի, նշենի, շլորենի, բնկուզեն

ի, տիպենի, քալենի և այլն/ աճում են բազմազան հողակլիմայական պայմաններում և տարբերվում են իրենց էկոլոգիական առանձնահատկություններով:

Հայաստանի Հանրապետությունում հանդիպում են քսերոֆիլ նոսրանտառներ: Քսերոֆիլ նոսրանտառները աճում են սակավահող, խճոտ, քարքարոտ սարավանջերին՝ ծովի մակերևույթից 700-1300մ բարձրության վրա: Ամենախոշոր զանգվածները կենտրոնացած են Չանգեզուրի, Վայքի, Փամբակի և Արեգունու լեռնաշղթանների հարավային լանջերում:

Բնության պահպանության իմաստով առանձնապես կարևոր են գիհիները, որոնց պահպանության գործը դժբախտաբար գտնվում է խիստ անմխիթար վիճակում: Մեծ քանակությամբ գիհիներ են ոչնչանում Նոր տարվա նախօրյակին, որպես տոնածառ օգտագործելու համար: Մինչդեռ գիհիները, աճելով այլ տեսակների համար անբարենպաստ հողերում, վերջիններս պահպանում են էրոզիայից, ապաստան են հանդիսանում մի շարք կենդանիների ու թռչունների համար, բարելավում շրջապատի միկրոկլիմայական պայմանները:

Առավել անտառածածկ են Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան մարզերը, որտեղ բուսականության հիմնական տիպը հաճարենու անտառներն են: Ենթալպյան անտառային գոտում տարածված են հաճարենու խոնավ անտառները, որոնց ներսում և եզրերին լայնորեն տարածված են կաղնու մաքուր և խառը ծառուտները: Կաղնու մաքուր անտառները հիմնականում համատարած են հարավային չոր լանջերի և վերին գոտիներում, իսկ կաղնու խառնանտառները արևմտյան և արևելյան լանջերին: Հյուսիսարևելյան մասի կաղնուտներում հիմնական անտառակազմող ծառատեսակներն են վրացական և արևելյան կաղնիները: Կաղնու առավել տիպիկ անտառները տարածված են Լոռու մարզում:

Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերում տեղ- տեղ հանդիպում են սոճու անտառների ոչ մեծ տեղամասեր: Հարավում անտառները համեմատաբար ընդարձակ տարածություններ հանդիպում են Սյունիքի մարզում /հիմնականում՝ վրացական կաղնի, հացենի, թխկի, բոխի, կովկասյան տանձենի, խնձորենի, հանդիպում

են նաև ալոճենի, հունական ընկուզենի, հոնի, արջընկույզ և այլն/: Հայաստանի մնացած մարզերում պահպանվել են արևելյան կաղնու անտառների առանձին, փոքր կղզյակներ Ապարանում, Բյուրականից վեր, Սևանի, Արեգունու լճեզերքին, Վեդի գետի ավազանում, Վայքում:

Անտառածածկ տարածքները ՀՀ-ում հիմնականում հասնում են արդեն իրեց ոչնչացման գագաթնակետին: Թեղուտի հիմնախնդիրը Հայաստանում առկա թերևս ամենատարածվածներից մեկն է: Հայաստանում բնության աղտոտման և ոչնչացման հաշվին փորձում են զարգացնել տնտեսությունն ու արդյունաբերությունը: Թեղուտի ոչնչացմամբ ՀՀ կկանգնի մի շարք խնդիրների առջև.

ա/կկրճատվի անտառների քանակը

բ/կաղտոտվի օդը

գ/կաղտոտվի ջուրը

ՀՀ անտառների նշանակությունը

ՀՀ անտառները լեռնային են, ունեն հողապաշտպան, դաշտապաշտպան, ջրապաշտպան, հակաէրոզային, ջրակարգավորիչ, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիային նշանակություն: Անտառներն օդը հարստացնում են թթվածնով, բարձրացնում են օդի հարաբերական խոնավությունը, կարգավորում մթնոլորտային տեղումների քանակը, մեղմացնում կլիման, բարերար ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության և մարդու առողջության վրա:

Ըստ իրենց նպատակային նշանակության՝ ՀՀ անտառները դասակարգվում են

- *պաշտպանական* /ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների, բարձր թեքության վրա գտնվող, անտառների վերին և ստորին սահմանների 200 մ լայնությամբ տարածքի, կիսաանապատային, տափաստանային, անտառատափաստանային գոտիներում աճող, բուսաբանական, կենդանաբանական այգիների,

դենդրոպարկերի շրջակայքի անտառները, որտեղ արգելվում են վերականգնողական հատումները/

- *հատուկ* /բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված, քաղաքային և քաղաքամերձ, ռեկրեացիայի և առողջարարական, սահմանային, ռազմական, պատմական և գիտական արժեք ներկայացնող, սանիտար, գոտիները պահպանող անտառներ, որտեղ սահմանափակվում և արգելվում են այդ տարածքների պահպանությանը չհամապատասխանող անտառօգտագործման ձևերը/
- *արտադրական* (բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառներ)

Անտառների պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը և արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև անտառների հաշվառումը, վերահսկումը և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի անտառային օրենսգրքով: Ըստ օրենսգրքի կկարգավորվի Հայաստանի Հանրապետության անտառներին վերաբերվող մի շարք կարևոր հարցեր.

ա/ անտառների նոր դասկարգում ըստ նպատակային նշանակության

բ/ անտառածածկ տարաքների ընդլայնում, կենսաբազմազանության պահպանություն

գ/ անտառային ոլորտի որոշումների ընդունմանը հասարակության մասնակցության ապահովումը

Վերջին հարյուրամյակում մարդու տնտեսական գործունեության հետևանքով Հայաստանի անտառների տարածքը կրճատվել է մոտ 2 անգամ, ընկել է անտառների արտադրողականությունը և պաշտպանական ունակությունը: Անտառածածկ տարածքի ընդարձակման, էրոզացված լեռնալանջերի անտառաբերելավման նպատակով Հայաստանում կատարվում են արհեստական անտառատնկումներ:

ՀՀ –ի անտառների հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետություն վերջին տարիների ընթացքում գնալով մեծ թափ են ստանում ապօրինի անտառահատումները : Իրականում հայտնի չեն այդ անօրինական գործողությունների իրական ծավալները և ինտեսիվությունը: Հիմախնդիրը բավականին սուր է այն համատեքստում, որ էներգակիրները գնալով թանկանում են, մասնավորապես գազը, և փոխարենը իշխանությունների կողմից ոչ մի այլընտրանք չի առաջարկվում: Հայաստանում անտառների քանակի նվազեցման հիմնակ պատճառը նաև ծառահատումն է: Միթե կարելի է ծառ հատել ու անխնայողաբար օգտագործել: Կորցնելով այս ռեսուրսը մենք կկանգնենք մի հիմնարար խնդրի առաջ: Մեր երկրում ծառահատումները հանգեցնում են հողի էրոզիայի, ջրհեղեղների ու սողանքների, աղբյուրների չորացման, կլիմայի փոփոխության ու կենսաբազմազանության նվազեցմանը:

Պատմական ամբողջ ժամանակաշրջանում մարդու տնտեսական անհեռատես գործունեության հետևանքով Հայաստանի ծառերի կրճատումից հետո տեղի է ունեցել նաև ծառատեսակների կազմի և դրանց տարածքային հարաբերակցության զգալի փոփոխություններ և մեծ մասամբ տնտեսապես ոչ ցանկալի: Այսօր Հայաստանի ծառերի 47%-ը պատկանում է միջին հասակային դասին. 26.3%-ը՝ հասուն և գերհասուն. և միայն 10.6%-ը՝ մատղաշ: Ծառահատումների հետևանքով կոնկրետ ծառատեսակների կանգնեցրել են վերացման եզրին՝ փոխելով ոչ միայն Հայաստանի անտառների խտությունը, այլև տնտեսական կազմը: Բնական սերմերով վերականգնումը անբավարար է հատկապես կաղնուտներում, որի պատճառով առանձին դեպքերում տեղի է ունենում անցանկալի տեսակափոխություն, ասենք՝ կաղնուն փոխարինում է բոխին: Այդ երևույթը նկատվում է Սյունիքի մարզի անտառներում:

Փայտանյութի ապօրինի մթերումը և վերամշակումը բավականին բարդ խնդիր է : Վերջինս իր բացասական ազդեցությունն է ունենում գյուղական համայքների բնակչության վրա, մանավանդ չքավոր խմբերի վրա, որոնք գոյատևման խնդիր ունեն և ուղղակի կախված են անտառից:

Որպես բնական ժառանգության կարևորագույն բաղադրիչ բնական պաշարների թվում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անտառները, որոնք ունեն բնապահպանական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև ազգային անվտանգությունն ապահովող բացառիկ ռազմավարական նշանակություն: Սակայն բնական գործոնների բացասական ազդեցության և գերշահագործման արդյունքում անտառային էկոհամակարգերը ներկայումս խիստ վտանգված են:

ՀՀ անտառները լեռնային են , ունեն հողապաշտպան, ջրապաշտպան, դաշտապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և հարուստ կենսաբազմազանություն:

Ըստ նշանակության՝ Հայաստանի անտառները դասակարգվում են՝

ա/ պաշտպանական նշանակության անտառներ /257 հազար հա/

բ/ սոցիալական նշանակության անտառներ /106 հազար հա/

գ/ հատուկ նշանակության անտառներ /96 հազար հա/

Ներկայումս բնական անտառների մոտ 70%-ը կազմալուծված ու ծերացած է, համեմատաբար դժվարամատչելի հասուն և գերհասուն անտառներում կենտրոնացած են փայտանյութի զգալի պաշարներ, որոնք ռելիեֆի կտրտվածության և դժվար հասանելիության պատճառով գերծ են մնում անտառօգտագործման շատ տեսակներից: Անկանոն անտառահատումները և անտառապաշտպանական միջոցառումների բացակայությունը հանգեցրել են անտառներում կլիմայական պայմանների փոփոխությանը, ինչպես նաև հրդեհավտանգության բարձրացմանը /բարձր ջերմաստիճան, առատ լույս/: Դրանք նպաստավոր պայմաններ են ստեղծել վնասատու միջատների և հիվանդությունների զանգվածային բազմացմանը, ինչպես նաև ծառուտների չորացմանը և հրդեհավտանգ պայմանների առաջացման համար: Հայաստանի անտառային պաշարների դեգրեդացիայի գործոններից են նաև վնասատուներն ու հիվանդությունները, գերարածեցումը, հողմերն ու երաշտը: Վերջին տարիներին ապօրինի հատումները դարձել են անտառային տնտեսության

զարգացմանը խոչընդոտող ամենահիմնական պատճառներից մեկը, որը պայմանավորված է ինչպես աղքատության բարձր մակարդակով, այնպես էլ հետապնդում է կոմերցիոն նպատակներ:

Եզրակացություն

Անտառը մարդկության օրրանն է: Մոտ մեկ միլիոն տարի առաջ երբ երկրագնդի վրա հայտնվեց նախամարդը, անտառները հսկայական տարածություն էին զբաղեցնում: Մարդն այնտեղ պատսպարվում էր գիշատիչներից, վատ եղանակից, ինչպես նաև սնունդ էր հայթայթում: Մակայն անցնելով նստակյաց երկրագործության, մարդն սկսեց ավելի մեծ չափերով կապվել անտառի հետ անթրոպոգեն ոչնչացնել անտառները, ցանքերի համար բերրի տարածություններ ազատելու նպատակով: Այսօր էլ մարդը շարունակում է ոչնչացնել անտառները: Սրանից 150 տարի առաջ երկրագնդի անտառային տարածությունները կազմել էին 4800 միլիոն հեկտար: Պատմական այս կարճ ժամանակաընթացքում այդ անտառների մոտ 1/7-ը լրիվ ոչնչացել է: Հնում անտառածածկ են եղել Սևանի ավազանը, Արագածոտնը: Մակայն օտարերկրյա նվաճողների հաճախակի արշավանքները, պատերազմներն ու գաղթը այդ շրջանները լրիվ անտառագուրկ են դարձրել:

90-ական թվականներին Հայաստանում տարեկան հատվում էր 348 հազար մ³ անտառանյութ, այլ խոսքով ասած անգամ ավելի, քան թույլատրվում էր անտառների վիճակը:

Անտառների հատումը Հայաստանի Հանրապետությունում բերում է անապատային տարածքների ավելացման:

Անտառների պահպանումը, դրանց վերականգնումն ու բարելավումը մեծ ու կարևոր պետական, համամարդկային խնդիր է, որի համար պայքարի պետք է ելնեն մոլորակի բոլոր մասերում ապրող ժողովուրդները:

Հայաստանի անտառների վիճակը բարելավելու և դրանց հետագա դեգրեդացիան կանխելու նպատակով անհրաժեշտ է ձեռք առնել մի քանի միջոցառումներ: Ամենից առաջ անհրաժեշտ է վերականգնել նոսրացած, կազմալուծված բույր ծառուտները, ուժեղացնելով և պահպանելով դրանց պաշտպանական հատկությունները: Մշտական պայքար պետք է կազմակերպել անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ, հիմնական ուշադրություն դարձնելով պայքարի կենսաբանական եղանակների վրա: Անտառը հրդեհներից պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է մեծածավալ աշխատանքներ տանել բնակչության շրջանում: Անտառը մեծ սանիտարահիգիենիկ և բուժիչ նշանակություն ունի: Անտառների պաշտպանության գործը բարձր հիմքերի վրա դնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել անտառապաշտպանության միջոցառումների ամբողջական համակարգ: Անտառի մոտ ապրել, նշանակում է սոված չլինել: Անտառը թագավորից հարուստ է: Անտառը ոչ միայն գայլին, այլ նաև մարդուն է կերակրում:

Ուսումնասիրելով այս ամենը և անտառի նշանակությունը տեսնում ենք, թե ինչ օգտակար հատկություն ունեն ծառերը և առավել ևս բնությունը: Դրա համար անհրաժեշտ է պահպանել բնության և բուսական, և կենդանական աշխարհը: Եվ նպաստել դրա զարգացմանը, մտածելով գալիք սերնդի մասին:

Գրականություն

1. Է. Մ. Հայրապետյան, Լ.Վ.Հարությունյան <<Բնության պահպանության հիմունքներ>>
2. Հայկական Սովետական Հանրագիտարան